

Ա.1 ԸՆՏՐԱՆՔԻ ՉԱՓԸ ԵՎ ԲԱՇԽՈՒՄԸ

Հայաստանի Ժողովրդագրական և առողջության հարցերի հետազոտության (ՀԺԱՀ) իրականացման համար անհրաժեշտ էր հանրապետության մակարդակով ներկայացուցչականությունն ապահովող 15-49 տարեկան կանանց և 15-54 տարեկան տղամարդկանց ընտրանք: Ընտրանքը մշակվել էր ապահովելու հետազոտության հիմնական ցուցանիշների (ներառյալ ծնելիության, արհեստական վիժումների և հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման մակարդակները) ինչպես ամբողջ Հայաստանի, այնպես էլ բնակության երեք կատեգորիաների կտրվածքով (Երևան, քաղաքային և գյուղական բնակավայրեր), և յուրաքանչյուր տաս վարչական տարածաշրջանների (մարզ) համար: Ընտրանքը մշակվել է նաև նորածնային և մանկական մահացության ցուցանիշների գնահատման համար և հանրապետության, և բնակության երեք կատեգորիաների կտրվածքով (Երևան, քաղաքային և գյուղական բնակավայրեր):

Ընտրանքի չափը կազմել է 6500 վերարտադրողական տարիքի հարցված կին հետևյալ բաշխվածությամբ՝ Երևան՝ 1500, յուրաքանչյուր 10 մարզում՝ 500: Յուրաքանչյուր մարզի քաղաքային և գյուղական բնակավայրերում ընտրանքը բաշխվել է ըստ համապատասխան բնակչության թվաքանակի: Արդյունքում ստացվեց 21 ընտրանքային շերտ (ստրատա), աղյուսակ Ա.1: Ընդհանուր առմամբ, ընտրանքը կազմել է Երևանում՝ 1500 կին հարցվողներ, քաղաքային բնակավայրերում՝ 2300 և գյուղական բնակավայրերում՝ 2700:

Կիրառվել է երկաստիճան ընտրանքի մեթոդ: Առաջին աստիճանում ընտրվել է 260 նախնական ընտրանքային տարածքային բնույթի միավորներ (այսինքն, ընտրանքային քլաստերներ) ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից տրամադրված ընտրանքային շրջանակից: Երկրորդ աստիճանում ընտրվել են տնային տնտեսություններ, որտեղ պետք է հարցվեին հետազոտության նպատակներին համապատասխանող 15-49 տարեկան կանայք: Ընտրանքը այնպես էր մշակված, որպեսզի ստացվի միջին հաշվով 25 կին հարցվող յուրաքանչյուր քլաստերից: Ընտրանքի շրջանակի և ընտրման երկու աստիճանների վերաբերյալ լրացուցիչ նկարագիրը բերվում է ստորև:

6430 կանանց հետ անց է կացվել ավարտուն հարցազրույց: 15-54 տարեկան տղամարդկանց հետ հարցազրույց է անցկացվել յուրաքանչյուր երրորդ տնային տնտեսությունում, որը կազմել է 1719 ավարտուն հարցազրույց:

Ա.2 ՏԱՐԱԾՔԻ ՇՐՋԱՆԱԿԸ

Շրջանակը բաղկացած է 1996թ. հասցեների և տնային տնտեսությունների տվյալների բազայի տարածքային բնույթի միավորների ցանկից: Տնային տնտեսությունների ցուցակագրումն իրականացվել է ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից 1996թ.-ին՝ ներառելով ամբողջ երկիրը: Շրջանակում ընդամենը սահմանազատվել է 1023 տարածք: Բացի երկու ամենամեծ քաղաքներից, որոնք բաժանվել էին երկու հատվածների, յուրաքանչյուր տարածք շրջանակում ցուցակագրվել էր ըստ ամբողջ քաղաքի կամ գյուղի: Յուրաքանչյուր տարածաշրջանի, ենթատարածաշրջանի (եթե կիրառելի է) և տեղայնքի համար շրջանակը տրամադրել է իդենտիֆիկացիոն տեղեկատվություն, ինչպես նաև քաղաք-գյուղ դասակարգումը և տեղանքի բարձրությունը (բաղկացած երեք կատեգորիաներից՝ <1300 մետր, 1300-1700 մետր և >1700 մետր):

Աղյուսակ Ա.1 Ընտրանքի բաշխումն ըստ մարզերի և բնակավայրի

Մարզը/ բնակավայրը	Բնակավայրը	Տնային տնտե- սությունների թիվը (1996)	Բնակչություն (1996)	Ընտրանքի չափը	Նախնական ընտրանքային տարածքային բնույթի միավորներ
Մարզը					
Երևան	1	252840	1036279	1500	60
Արագածոտն	1	9918	44046	146	6
	2	30794	107263	354	14
Արարատ	1	18981	81071	142	6
	2	57525	204999	358	14
Արմավիր	1	22648	105795	178	8
	2	62048	191602	322	12
Գեղարքունիք	1	22937	92369	179	8
	2	48641	165544	321	12
Լոռի	1	53578	201767	315	12
	2	34222	118516	185	8
Կոտայք	1	41321	172026	296	12
	2	29394	118324	204	8
Շիրակ	1	61399	233853	338	14
	2	29671	111746	162	6
Սյունիք	1	25988	101178	338	14
	2	14415	48554	162	6
Վայոց ձոր	1	6179	26316	198	8
	2	11537	40104	302	12
Տավուշ	1	14015	57599	192	8
	2	26761	92729	308	12
Տարածաշրջանը					
Երևան		252840	1036279	1500	60
Այլ քաղաքային		276964	1116020	2321	96
Գյուղական		345008	1199381	2679	104
Զայաստան		874812	3351680	6500	260

1 = Քաղաքային

2 = Գյուղական

Քաղաքային բնակավայրերում չափի որոշումները հիմնված էին 1996թ. անհատական տարածքների բնակչության հաշվարկների վրա: Գյուղական բնակավայրերում չափի որոշումները սահմանվել էին որպես գյուղերի տնային տնտեսությունների թիվը՝ բազմապատկելով տարածաշրջանի գյուղական հատվածի տնային տնտեսության միջին չափով: Նման որոշման պատճառ էր հանդիսանում առանձին գյուղերի համար բնակչության թվերի որոշ անճշտությունը, մինչդեռ տնային տնտեսությունների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունն ավելի հավաստի էր: Հատկանշական է, որ տարածաշրջանի գյուղական բնակավայրերը գումարելիս՝ ընդհանուր գյուղական չափը հավասար էր 1996թ.-ի սվյալների բազայի ընդհանուր բնակչությանը, այնպես, որ աղյուսակ 1-ում բերված թվերն ազդեցության չեն ենթարկվել:

Ընտրանքի ընտրության համար տարածքները դասավորվել էին ըստ հետևյալ հինգ փոփոխականների և հերթականությամբ.

1. Տարածաշրջան (այսինքն՝ մարզ) (00-10)
2. Քաղաք-գյուղ (1-2)
3. Բարձրությունը (1-3)
4. Ենթատարածաշրջան (որտեղ նշվել է)
5. Տարածքի բնակչությունը (այսինքն՝ չափի որոշումը):

Առաջին երկու փոփոխականներն օգտագործվել են ճշգրիտ շերտերը (ստրատաները) որոշելիս՝ ընտրության նպատակով (այսինքն, յուրաքանչյուր տարածաշրջանի համար քաղաքային և գյուղական նախնական ընտրանքային տարածքային բնույթի միավորների (ՆԸՄ) նախապես որոշված քանակը ընտրվեց անկախ: Մնացած երեք փոփոխականները սխտեմատիկ ընտրության համար տրամադրել են ենթադրելի կարգ:

Ա.3 ՆԱԽՆԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Նախնական ընտրանքային տարածքային բնույթի միավորների ընտրման սկզբնական փուլը բաղկացած էր երկու քայլերից. առաջինը 1023 տարածքներից տարածքային միավորների ընտրությունը ընտրանքային շրջանակում, ըստ “սխտեմատիկ” ընտրանքի՝ բնակչության թվաքանակի համամասնությանը հավասարազոր (ԲԹՀ): Ընդամենը ընտրվեց 211 բնակավայր:

Այնուամենայնիվ, ընտրված բնակավայրերից 25-ը, մասնավորապես, մեծ էին (այսինքն, ինքնաներկայացուցչական էին և ընտրվել էին ավելի քան մեկ անգամ ըստ “սխտեմատիկ” ԲԹՀ ընտրանքի), այսպիսով, անհրաժեշտ էր ընտրել ավելին քան մեկ նախնական ընտրանքային տարածքային բնույթի միավոր այդ 25 բնակավայրերում: Այդ 25 բնակավայրերից ստեղծվեցին ընդամենը 74 նախնական ընտրանքային տարածքային բնույթի միավորներ: Ընդհանուր առմամբ, այս 74 նախնական ընտրանքային տարածքային բնույթի միավորները և 186 (211-25) ոչ ինքնաներկայացուցչական նախնական ընտրանքային տարածքային բնույթի միավորները ընդամենը տրամադրում են 260 նախնական ընտրանքային տարածքային բնույթի միավորներ:

Այս տեսանկյունից, ընդհանուր առմամբ, յուրաքանչյուր մարզի համար ընտրանքի հավանականությունը (f) և յուրաքանչյուր ընտրված նախնական ընտրանքային տարածքային բնույթի միավորի համար նախնական առաջին փուլի ընտրանքի հավանականությունը (f_1) հայտնի էր:

Ա.4 ԵՐԿՐՈՐՂԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԵՎ ՍԵԳՄԵՆՏԱՑԻԱՆ

Արժեքի և միջոցների առկայության տեսանկյունից 260 նախնական ընտրանքային տարածքային բնույթի միավորների մեծ մասը մեծ էին տնային տնտեսությունների ցուցակագրման համար: Համապատասխանաբար, գրեթե բոլոր նախնական ընտրանքային տարածքային բնույթի միավորները բաժանվել էին երկրորդական ընտրանքային տարածքային բնույթի միավորների (ԵԸՄ) նախապես որոշված “a,” քանակության: Երկրորդական ընտրանքային տարածքային բնույթի միավորների ստեղծումը, եթե հնարավոր է, կատարվել է գրասենյակում, որը հիմնված էր 1996թ.-ի տվյալների բազայի քարտեզային նյութերում բերված սահմանների և ճշումների վրա: Ստեղծված երկրորդական ընտրանքային տարածքային բնույթի միավորները ունեին հստակ սահմաններ և հայտնի էր նրանց չափը:

Ստեղծված երկրորդական ընտրանքային տարածքային բնույթի միավորներից մեկն ընտրվել է ԲԹՀ-ով, այսինքն հավանականությամբ.

$$p_i = \frac{M_i}{M} \quad M = \sum_{i=1}^a M_i - \text{ով},$$

որտեղ M_i – i -րդ ԵԸՄ-ի համար չափի գնահատականն է:

Տնային տնտեսությունների ցուցակագրման խնդիրը հետագայում նվազեցվեց սեգմենտացիայի միջոցով: Յուրաքանչյուր ԵԸՄ բաժանվել է 8 սեգմենտների: Սեգմենտի սահմանները որոշվել են դաշտում: Սեգմենտները խմբավորվել են 4 զույգերի՝ միավորելով ամենամեծ և ամենափոքր սեգմենտները, հաջորդ ամենամեծ և ամենափոքր սեգմենտները, և այլն: Չափի գնահատականը՝ s_{ij} , սեգմենտների յուրաքանչյուր զույգի համար ձեռք է բերվել կամ 1996թ. տվյալների բազայից կամ դաշտում կատարված արագ հաշվարկներից: Դիցուք s_{ij} -ն բնակչության չափի գնահատականն է ԵԸՄ-ի j զույգի համար: Ձույգերից մեկն ընտրվել էր ԲԹՀ-ի հետ, այսինքն հետևյալ հավանականությամբ

$$p_{ij} = \frac{s_{ij}}{S_i} \quad \text{v} \quad S_i = \sum_{j=1}^4 s_{ij} - \text{ով}$$

Սեգմենտացիայից հետո, ընտրված ԵԸՄ-ի ընտրանքային հավանականության առաջին քայլը հետևյալն էր.

$$f'_i = p_i \cdot p_{ij} \cdot f_1, \quad (p_i \cdot p_{ij} < 1)$$

Ա.5 ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒՄՆ ՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Տնային տնտեսությունների ամբողջական ցուցակագրումն իրականացվել է սեգմենտների ընտրված զույգերում, որպեսզի կառուցել ընտրանքային շրջանակ ընտրված տնային

տնտեսությունների համար:

Անհրաժեշտ տնային տնտեսությունների քայլային ընտրանքի գործակիցը հետևյալն էր.

$$f'_2 = (f)/(f'_1)$$

Բոլոր ՆԸՄ-ում ընտրանքի գործակիցը ցուցակագրված սեզմենտներից տնային տնտեսությունների ընտրման համար մոտիկ էր մեկ ութերորդին (այսինքն՝ 0.125). Այս արդյունքը նախատեսված էր: Յուրաքանչյուր ՆԸՄ-ում ստեղծված ԵԸՄ-ի քանակն այնպես էր կառուցված, որպեսզի ստացվեր այս արդյունքը: Ընտրանքային սեզմենտներում համեմատաբար համանման ընտրանքային գործակիցը նշանակում է, որ չնայած փոփոխականը վերցվել է յուրաքանչյուրից՝ միջին հաշվով, ամբողջական հարցագրույցների նպատակային թիվը մնացել է 25 մեկ ՆԸՄ-ի հաշվով:

Ա.6 ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿՑԻ ԾՇՏՈՒՄԸ ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒՄԻՑ ՅԵՏՈ

Քանի որ 1996թ. տվյալների բազայում բերված բնակչության չափի վերաբերյալ գոյություն ունեին որոշակի անվստահություններ, երկրորդ փուլի ընտրանքի գործակիցները ճշտվել են, որպեսզի վերահսկել վերջնական ընտրանքի չափը: Վերջինս ընդհանուր ճշտում էր ամբողջ ընտրանքի համար, որպեսզի չազդեր նախատեսված գործակիցների վրա: Դիցուք յուրաքանչյուր ՆԸՄ-ի համար (ընտրանքի տարածք k ՝ j - ուն) .

L_{jk} = ընտրված ՆԸՄ-ում ցուցակագրված տնային տնտեսությունների թիվն է (ինչպես արդեն նշվել է սեզմենտների ընտրված զույգն է կամ եթե ամբողջ տարածքը չէր սեզմենտավորվել):

$f'_{2,jk}$ = ՆԸՄ-ում տնային տնտեսության ընտրման համար ընտրանքի հատվածի երկրորդ փուլ:

Սա նշանակում է, որ ակնկալվող ընտրվելիք տնային տնտեսությունների թիվը հետևյալն է

$$h_{jk} = L_{jk} \cdot f'_{2,jk}$$

Դիցուք X_j –ը տնային տնտեսություններից դեպի կանանց ամբողջական հարցագրույցներ փոփոխման գործոնն է j շրջանում.

$$X_j = H_j \cdot W_j \cdot r_j$$

որտեղ H_j –ը տնային տնտեսության միջին չափն է, W_j –ը 15-49 տարեկան կին բնակչության հարաբերակցությունն է (այսինքն, բնակչության մեջ մեկ շնչի հաշվով իրավասու կանանց ակնկալվող թիվը) և r_j –ը պատասխանների ակնկալվող մակարդակն է: Ընդհանուր առմամբ, օգտագործվել են թվեր՝ հանրապետության կտրվածքով. $H_j = 3.84$, $W_j = 0.278$ և $r_j = 0.94$ (6% չպատասխանողներ):

Արդյունքում ստացվում է ամբողջական հարցագրույցների ակնկալվող թիվը

$$n' = \sum_j [X_j \cdot \sum_k (L_{jk} \cdot f'_{2,jk})]$$

բոլոր ՆԸՄ-ի գումարը (սեգմենտներ կամ տեղանքներ) ընտրանքում:

Որպեսզի ստանալ պահանջվող ընտրանքի չափը $n=6,500$ ամբողջական հարցազրույց, երկրորդ փուլի ընտրանքի մասը ճշտվել է գործոններով ($n/n' = 6500/5403 = 1.20$), այսինքն, փոփոխվել է յուրաքանչյուր շրջանում հետևյալ կերպ.

$$f_2''_{jk} = \left(\frac{n}{n'}\right) \cdot f_2'_{jk}.$$

Վերջնական ընտրանքային մասերի հիման վրա տնային տնտեսություններն ընտրվել են սիստեմատիկորեն տնային տնտեսությունների աշխարհագրական ցուցակներից:

Ա.7 ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Աղյուսակներ Ա.1 և Ա.2-ը մանրամասն տեղեկատվություն են ներկայացնում տնային տնտեսությունների և անհատական հարցազրույցների վերաբերյալ: Ջբաղեցված տնային տնտեսությունների 97 տոկոսի հետ անցկացվել է տնային տնտեսության ամբողջական հարցում: Այդ տնային տնտեսություններում հարցման նպատակներին համապատասխանող ընդամենը 6685 կանայք և 1913 տղամարդիկ (յուրաքանչյուր երրորդ տնային տնտեսությունից) ընտրվեցին անհատական հարցազրույցների համար: Որոշված իրավասու կանանց 96 տոկոսի հետ անցկացվել է ամբողջական հարցազրույց: Տղամարդկանց 90 տոկոսի հետ անցկացվել է ամբողջական հարցազրույց: Հարցման նպատակներին համապատասխանող կանանց և տղամարդկանց չպատասխանելու գլխավոր պատճառը նրանց տանը չլինելն է, չնայած այն հանգամանքին, որ տնային տնտեսություններ կատարվել են կրկնակի այցելություններ: Մերժման մակարդակը ցածր է:

Հարցման նպատակներին համապատասխանող կանանց և տղամարդկանց պատասխանների գործակիցները չեն տարբերվում ըստ քաղաքային/գյուղական բնակավայրերի:

Աղյուսակ Ա.2 Ընտրանքի իրականացումը. կանայք

ԺԱՀ-ն ընտրանքում տնային տնտեսությունների և իրավասու կանանց տեսակարար կշիռն ըստ հարցազրույցի արդյունքի, և տնային տնտեսության, իրավասու կանանց և ընդհանուր պատասխանների գործակիցներն ըստ մարզերի և քաղաքային և գյուղական բնակավայրերի, Հայաստան 2000թ.

Հարցազրույցի արդյունքը և պատասխանի գործակիցները Քաղա- գյու- քային դական Ընդամենը

Տնային տնտեսության հարցազրույց			
Ամբողջական (C)	89.8	94.0	91.7
Չկա իրավասու հարցվող (HP)	2.2	1.1	1.7
Մերժված է (R)	1.2	0.4	0.8
Կացարանը չի գտնվել (DNF)	0.1	0.0	0.1
Բացակայում է (A)	5.6	4.1	4.9
Կացարանը դատարկ է (DV)	1.1	0.4	0.8
Ընդհանուր տոկոսը	100.0	100.0	100.0
Թվաքանակը (մարդ)	3629	2895	6524
Պատասխանի գործակիցը (HRR) ¹	96.3	98.4	97.2
Կանանց հարցազրույց			
Ամբողջական (EWC)	95.8	96.6	96.2
Տանը չէ (EWNH)	2.5	1.9	2.2
Մերժված է (EWR)	1.2	0.6	1.0
Մասամբ է լրացված (EWPC)	0.1	0.2	0.1
Անընդունակ է (EWI)	0.4	0.6	0.5
Ընդհանուր տոկոսը (EWO)	100.0	100.0	100.0
Թվաքանակը (մարդ)	3699	2986	6685
Պատասխանի գործակիցը (EWRR) ²	95.8	96.6	96.2
Պատասխանի ընդհանուր գործակիցը (ORR) ³	92.3	95.1	93.5

¹ Օգտագործելով հատուկ պատասխանի կատեգորիաներում տնային տնտեսությունների քանակը՝ տնային տնտեսության պատասխանի գործակիցը (HRR) հաշվարկվում է որպես՝

$$\frac{100 \times C}{C + HP + R + DNF}$$

² Օգտագործելով հատուկ պատասխանի կատեգորիաներում իրավասու կանանց թվաքանակը՝ իրավասու կանանց պատասխանի գործակիցը (EWRR) հաշվարկվում է որպես՝

$$\frac{100 \times EWC}{EWC + EWNH + EWR + EWPC + EWI + EWO}$$

³ Պատասխանի ընդհանուր գործակիցը (ORR) հաշվարկվում է որպես՝

$$ORR = HRR * EWRR/100$$

Աղյուսակ Ա.3 Ընտրանքի իրականացումը. տղամարդիկ

ԺԱՀ-ն ընտրանքում տնային տնտեսությունների և իրավասու տղամարդկանց տեսակարար կշիռն ըստ հարցազրույցի արդյունքի, և տնային տնտեսության, իրավասու կանանց և ընդհանուր պատասխանների գործակիցներն ըստ մարզերի և քաղաքային և գյուղական բնակավայրերի, Հայաստան 2000թ.

Հարցազրույցի արդյունքը և պատասխանի գործակիցները Քաղա- գյու- քային դական Ընդամենը

Տնային տնտեսության հարցազրույց			
Ամբողջական (C)	89.4	92.3	90.7
Չկա իրավասու հարցվող (HP)	2.4	1.7	2.1
Մերժված է (R)	1.3	0.4	0.9
Կացարանը չի գտնվել (DNF)	0.2	0.0	0.1
Բացակայում է (A)	6.0	5.0	5.6
Կացարանը դատարկ է (DV)	0.7	0.5	0.6
Ընդհանուր տոկոսը	100.0	100.0	100.0
Թվաքանակը (մարդ)	1224	967	2191
Պատասխանի գործակիցը (HRR) ¹	95.9	97.8	96.7
Տղամարդկանց հարցազրույց			
Ամբողջական (EMC)	90.2	89.4	89.9
Տանը չէ (EMNH)	7.0	8.1	7.5
Մերժված է (EMR)	1.8	1.3	1.6
Մասամբ է լրացված (EMPC)	0.1	0.0	0.1
Անընդունակ է (EMI)	0.9	1.3	1.0
Ընդհանուր տոկոսը (EMO)	100.0	100.0	100.0
Թվաքանակը (մարդ)	1045	868	1913
Պատասխանի գործակիցը (EMRR) ²	90.2	89.4	89.9
Պատասխանի ընդհանուր գործակիցը (ORR) ³	86.5	87.4	86.9

¹ Օգտագործելով հատուկ պատասխանի կատեգորիաներում տնային տնտեսությունների քանակը՝ տնային տնտեսության պատասխանի գործակիցը (HRR) հաշվարկվում է որպես՝

$$\frac{100 \times C}{C + HP + R + DNF}$$

² Օգտագործելով հատուկ պատասխանի կատեգորիաներում իրավասու տղամարդկանց թվաքանակը՝ իրավասու կանանց պատասխանի գործակիցը (EMRR) հաշվարկվում է որպես՝

$$\frac{100 \times EMC}{EMC + EMNH + EMR + EMPC + EMI + EMO}$$

³ Պատասխանի ընդհանուր գործակիցը (ORR) հաշվարկվում է որպես՝

$$ORR = HRR * EMRR/100$$